



ՀԱՆՐԱՊԵՏ ՀՈԳԻՈՅ


Հ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

Սեպտեմբեր 3ին, Հալեպի Սէն Լուի հիւանդանոցին մէջ աչքերը կը փակէր Մըխիթարեան վաստակաւոր մշակ մը, Հ. Գրիգոր Վրդ. Սարգսեան, խոր սուգի մէջ համակելով համօրէն Միաբանութիւնը:

Ամառնային արձակուրդներու շրջանը
փափաքած էր Գամասկոս անցընել այս
տարի, եւ հոն դացած էր Յուլիսի վերջե-
րը։ Անահկակալ անհանգստութիւն մը եւ
ստամոքսի սուր ցաւեր զինք ստիպեց էին
փութով վերադառնալ իր առաքելաւայ-
րը՝ Գամբշի։ Հիւանդութեան ծանրանա-
նալուն, տեղւոյն Առաջնորդը կը փութայ
սաւառնակով Հալէպ փոխադրել հիւանդը
եւ բժշկական խնամքներու յանձնել։ Նախ
կ'ըսուի թէ կուրադիքէ կը տառապէր. սա-
կայն վերահաստմը ցոյց կու տայ մար-
սափելի ներկայութիւնը քաղցկեղին։ Գոր-
ծողութենէն ետք, հակառակ բժիշկներու
ենթադրութիւններուն, կ'ապրի տաւալուն
քանի մը օր, կեանքի եւ մահուան սահ-
մաններուն վրայ, օրինակելի համակա-
մութեամբ կրելով դառնակսկիծ ցաւերը։

Մահուան անկողնին մէջ, անոյշ ժպիտով եւ հոգեկան անդորրութեամբ կ'ընդունի Հայէպի Սոսանորդ՝ Գրպօ՝ Գէորգ Լայէքեանի քաւիչ արձակումն ու օրհնութիւնը, կը զօրանայ սուրբ խորհուրդներով եւ իր եղբայրակից Հայրերու բաղուկներուն մէջ կ'աւանդէ իր բարի հոգին :

Հ. Գրիգոր Վրդ. Սարգսեան, աւագանի
անուանով Գաբրիէլ, ծնած էր 1896ին,



Մարտինի Թեկերմէն Հայաչունչ գիւղը, եւ
մայրական կաթին հետ ծծած էր հայկա-
կան ոգի եւ կորոյ :

Տասնևեօթը տարեկան էր, 1913ին, երբ Ս. Ղազար մտնելու փափաք կ'ունենար, յետ աւարտելու տեղական ուսումնները: Օժտուած զորաւոր յիշողութեամբ և մասնաւորապէս հին լեզուներ սորվելու ճիւղերով, շուտով կը յառաջդիմէ վանական ուսումներուն մէջ, դասընկեր ունենալով Հ. Վահան Յովհաննէսեան, Հ. Եղիա Փէշիկեան եւ Հ. Ստեփան Ֆերահեան ապագայ վարդապետները: 1914ին հաղած է կրօնաւորական սքեմը. յաջորդ տարին իսկ, ուխտերով անդամակցած է Միաբա-

նութեան: 1916ին զինք կը գտնենք արդէն
խոկ Հոռոմ, փիլիսոփայութեան համալսա-
րան, զոր կ'աւարտէ երեք տարիէն, փայ-
լուն յաջողութիւններով. ապա չորս տա-
րի եւս աստուածաբանութիւն: Կը շահէր
երրայեցեղէն լեզուի ոսկի մետալ: Իր ձեռ-
նադրութիւնը տեղի կ'ունենայ 1922ի Նո-
յեմբեր 1ին, Հոռոմի մէջ:

յեմբեր 1ին, Հոռով մէջ։

Երկտասարդ վանականը, Միաբանու-
թեան կարգադրութիւններուն հետեւելով,
նախ կը նուիրուի ուսուցչութեան։ Հմուտ
զբարարագէտ եւ մատենադրական պրպլը-
տումներու սերահար, քաջ ծանօթ ասո-
րերէնի, տարբերէնի, լատիներէնի եւ յու-
նարէնի, կը մտնէ բանասիրական ասպա-
նակէն, ձեռագիրներ, Միւլթար Գոշ,
նախնեաց բնավորներ, Միւլթար Գոշ,
Գրեկոս Անաւարդեցի կաթողիկոս, Դա-
ղար Փարպեցի, Ս. Եփրեմ, Պրովկ։ Կ'աշ-
խատակի «Բաղմայէպ»ին հմտալից յօդ-
ուածներով։ Հայերէն լեզուի եւ գրական-
նութեան դասեր կ'աւանդէ վանքին եւ
Մուրատ-Ռաֆայէլեանի մէջ, կը պաշտո-
նավարէ Թիեոսոփի եւ Միլանի մեր հա-
տաւորութիւններուն մէջ։

[illegible]

Նախանձախնդիր հայերէն սիրող շարա-
ծէսին հարադատութեան, սիրող շարա-
կաններու եւ եկեղեցական հինաւուրց մե-
ղեղիններու, կ'ըսեն թէ յաճախ իր սենեա-
կի առանձնութեան մէջ կ'ապրէր վանա-
կան արարողութիւնները ամէն մանրա-

մասնութեամբ եւ Լ'սղեւորուէր Ս. Ղա-
ղարի երազով:

Մի նշեալ վերջին պահը կը խորհէր Միւրանութեան յաջողութեան հարցով, հարցումներ կ'ուզէր նորահաս սերունդին մասին, եւ իր կարողութեանը չափ հետամուտ էր վանք հասցնելու աստուածանուէր մանուկներ :

նուէր մանուկները։

Իր մեծ փափաքներէն մէկն ալ լատինե-
րէնի թարգմանել էր մեր հայկական շա-
րականները, եւրոպական բանասիրու-
թեան ներկայացնելու համար այդ զոհար-
ները. տարիներէ ի վեր կ'աշխատէր այդ
ուղղութեամբ, նոյնիսկ իր առաքելավա-
րին մէջ. իր ձեռագիրներուն վրայէն կա-
րելի է նոյնիսկ որոշել թէ ո՛րքան տող
թարգմանած է այս ինչ օրը։ Մահէն զը-
սան օր առաջ դրած նամակով՝ մեղի կը
տեղեկացնէր թէ այս տարի, արձակու-
րէն շրջանին, պիտի վերաքննէր լատինե-
րէն այդ թարգմանութիւնը, մօտերս հը-
րատարակելու ծրագրով։ Արդէն չառնց
լրացուցած էր Յարութեան ամբողջ շա-
րականները, սկսած 1918ին, ուսանողու-
թեան օրերուն. վերջէն կը փութար լրա-
ցնել նաեւ Պահոց շարականները։

Նամակին հետ զրեթէ միասին հասաւ
ցաւալի լուրը, նախ իր ծանր հիւանդու-
թեան, ապա բժշկական դարմանումնե-
րուն, եւ հուսկ... ցաւալին եւ անխուս-
փելին, որուն առջեւ խոնարհած ու հա-
մակամ, արցունքոտ աչքերով հանդիստ կը
հայցենք Բարձրեալէն իր վաստակաւոր
առաքեալին հոգւոյն:

առաքեալին հոգւոյն :
Իբր շատ սիրելի դասընկերոջ՝ Հ. Եղիա-
վբղ.՝ փէշիկեանի մահէն ճիշտ եօթը ա-
միս ետք, զնայ միանալու անոր, զո՛հ նոյն
տնոյոք հիւանդութեան, միասին երգելու
համար, ինչպէս հոս, նոյնպէս երկնքի
մէջ, մեր լուսեւրոմ Սահակներուն ու Շը-
նորհալիներուն հետ, հրեշտակային շա-
րականներն յաւերժական :
Հանդիստ յաւիտենական պարգեւեալ նո-
յա, Տէր :

gum, 351

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

1. - Միջերկրային Գոշի՝ երկաթի ոգեշնչման, տպ. վեհապետի, Ս. Ղազար 1933, էջ 82 (Սովետական հայկական, հա. իր.) :
2. - Ս. Եփրեմի խորհրդի Աստուծոյ՝ կրթութիւն, տպ. վեհապետի, Ս. Ղազար 1934, էջ 142 (Սովետական հայ. իր.) :
3. - Ղազար Գաբրիելի, Պատմութիւն Հայոց եւ թուրքի մո վաճառ Մամուլիւնեան, տպ. 1933, էջ 675 (Շարք ընտրի մատենագրաց նախնեաց, հա. իր.) :
4. - Տեսիլ Ս. Սահակայ Պարթևի (քննական ծառայութիւններով եւ ձեռագրական համեմատութիւններով) . տպ. վեհապետի, Ս. Ղազար 1932, էջ 61 :
5. - Պատմութիւն Հայ հին դարերէն (Գ. Գ. Գար) Հ. Գարեգին Զարբհանաւանի, չորրորդ տպ. 1932, վեհապետի, Ս. Ղազար 1932, էջ ԻԵ+ 819 :
6. - Վարդ Առնալի (հեղ. Պ. Մուսոյի) - Թարգմանութիւն խաղերէնէ, տպ. վեհապետի, Ս. Ղազար 1937, էջ 126 :
7. - Մենարայեան Այրուրենի, Ա. տեար. տպ. Հաւիւ, 1955, էջ 16 :

ՅՕԳՈՒԱԾՆԵՐ

Հ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- Հայ դրօշը - Բազմ. 1927, էջ 153-157 :
- Գերդ. Տէր Եղ. Մ. Վրդ. Թիւրքանի վառնիւնու «Մայր Յուդակ Հայ. Զեռագրաց» զրքին առթիւ - Բազմ. 1928, էջ 376-380. 1929, էջ 127-128, 255-256 :
- Տեսիլ Ս. Սահակայ Պարթևի (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1931, էջ 529-536. 1932, էջ 12-21 :
- Առ Քննաւոր (Յառաջարկ Հ. Գ. Զարբհանաւանի «Պատմ. Հայ հին դարերէն» զրքին չորրորդ տպագրութեան առթիւ) - Բազմ. 1932, էջ 163-166 :
- Փարպեցւոյն Յառաջարկ յղկուած (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1932, էջ 444-453 :
- Միջերկրային Գոշի «Խրատք ողեւաճ» (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1933, էջ 450-459, 481-490 :
- Երանելւոյն Պրոկիլի Եպիսկոպոսայեանի կոտորան -

- զինուորային յԱստուածայայտնութիւնն (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1934, էջ 5-8 :
- Ս. Եփրեմի «Կցուրդ»ները (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1934, էջ 144-155 :
- Գրիգոր Կաթողիկոս Անուարդեցի Մատենագիր (Ուսումնասիրութիւն եւ բնագիր) - Բազմ. 1947, էջ 201-212. 1948, էջ 4-9. 1949, էջ 58-66, էջ 116-123 (չարտնակելի) :
- Ա. Մաշտոցը - Բազմ. 1949, էջ 114-115 :

ԼԵԶՈՒԱԿԱՆ

- Դիտողութիւններ (Հր. Ա. Մատենանի) «Հայերէն նոր բառեր»ուն - Բազմ. 1927, էջ 14-16, 43-46, 105-107, 179-182, 239-244 :
- Պ. Հր. Ա. Մատենանի մէկ նոր սխալը (Աստուած բառը սովորաբար Աստուծոյ կ'ըլլայ, եւ ոչ Աստուածոյ) - Բազմ. 1927, էջ 364-367 :
- Սրահանդ բառին ստուգարանութիւնը - Բազմ. 1928, էջ 142-143 :
- Բառարան. նոր չարքին առթիւ (տ. Հանդ. Ա. մ. 1929, Ապրիլ) - Բազմ. 1929, էջ 171-174, 208-211 :
- Մերթէլի առաջարկ մը (Գոթիւն երգերու մասին) - Բազմ. 1929, էջ 211-212 :
- Ոսկեղարու ըմբռնումը - Բազմ. 1929, էջ 379-383 :
- Կցուրդը (Հանդ. Ա. մ. 1929, յօդուածի մ'առթիւ) - Բազմ. 1929, էջ 136-139 :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

- Գերդ. Իզնատիոս Մալոյեանի, Մարտինու Արքեպի հրաժեշտի ճառ - Բազմ. 1918, էջ 194-196 :
- Շրջաբերական Իզնատիոս Արքեպ. Մալոյեանի (Հանդերձ նահատակութեան պատմութեամբով, 1915 Յունիս 10) - Բազմ. 1921, էջ 23-24 :
- Միկրոսթիւն ուղիղ դադարաւորը («Գիտարան»ի մէկ յօդուածին հերքումը) - Բազմ. 1923, էջ 150-152, 180-181, 248-250, 311-316 :
- «Բանբեր»ին դէմ («Յիսուս Քրիստոսեան»-ի յօդուածին մասին քննադատութիւն) - Բազմ. 1933, էջ 234-235 :
- Պատասխան «Սիոն»ին (Քաւարանի մասին) - 1934, էջ 75-76 :

ՊԱՏՄԱԿԱՆ

- Հայ հին նշմարներ Բառուայի մէջ - Բազմ. 1928, էջ 336-339 :
- Հայկական վանք մը ի նախնի (Թրքմ. L'Osservatore Romano, 1933, Ապրիլ 10-11, էջ 2) - Բազմ. 1933, էջ 352-354 :
- Արտաշէս Գարիպեան, պատկաւոր Միլանու Գեղարուեստից Ակադեմիայէն - Բազմ. 1947, էջ 252 :

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

« ԲԱԶՄԱՎԵՊ »

1964

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ
ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ

- Ուրախ լեր, սուրբ Եկեղեցի 1
- Միջերկրային Միտանութեան նորընտիր Արարչայր Գեր. Հ. Հմայեակ վարդ. Կէտիկեան 177

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ
Կ. Հ. Հ.
ՇԻՒՑ ԷՏ.

- Վարդ Ս. Մենարայ Մաշտոցի (Շարք) 105, 182
- Յակոբ Կլայեցի Լուկիա չէ գտնուած 34
- Հայկական հին տպագրութիւններ՝ Սեչէնի Պետական Մատենադարանին մէջ (Թրք. Հ. Դուկաս Փոկոյեան) 259

ԶՐԱԲԵԱՆ Հ. ԲԵՐՈՐԷ

- Կաթողիկէ Թուրքերու Խմբաւոր մեկնութիւն (Շարք. եւ վերջ) 191, 245
- Յոհան Մայրաւանեցի - կոչուած նաեւ Մայրաղոմեցի (Շարք. եւ վերջ) 14

ԲԻՊԱՐԵԱՆ Հ. ԿԻՐԵՂ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԵՈՐԳԵԱՆ ԳԱՌՆԻԿ
ԳԵՈՐԳԵԱՆ ԳԱՌՆԻԿ
ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ Հ. ՍԱՀԱԿ

- Չնքուն անիրաւուած 123
- Հայ Չնքուն ժիւղի դար 218
- Քննական պատմութիւն Բաղրատունեաց թագաւորութեան անկումէն մինչեւ մեր օրերը 26, 199
- Հայ վարդապետներու գերդաստան մը՝ Եղիպտոսի մէջ, Մէմլուքներու շրջանին 117, 213, 247

ԲԻՒՐՏԵԱՆ Յ.